ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

à ð à Þ à ô Ø

6 մայիսի 2010 թվականի N 524 - Ա

ՍԻՆԽՐՈՏՐՈՆԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԱՐԱԳԱՑՈՒՑԻՉ ՀԵՆՔԻ ՎՐԱ «ՔԵՆԴԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 4-ի N 1478-Ա որոշման և նկատի ունենալով Սինխրոտրոնային ճառագայթման արագացուցչի հենքի վրա «Քենդլ» միջազգային կենտրոնի նախագծի (այսուհետ՝ «Քենդլ» նախագիծ) իրականացման կարևորությունը Հայաստանի Հանրապետությունում առաջատար կիրառական գիտական հետազոտությունների և տեխնոլոգիաների զարգացման գործում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել «Քենդլ» նախագծի արժեքի 25 տոկոսի սահմաններում ֆինանսական մասնակցություն ունենալու իր պատրաստակամությունը և հրավիրել օտարերկրյա պետություններին և միջազգային կառույցներին մասնակցելու «Քենդլ» միջազգային կենտրոնի կառուցմանը և օգտագործմանը:

2. Սահմանել, որ «Քենդլ» նախագծի իրականացման պատասխանատուն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն է:

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահին՝

1) «Քենդլ» գիտահետազոտական ինստիտուտի հետ համատեղ մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնել «Քենդլ» նախագծի իրակա-նացման համար անհրաժեշտ միջոցառումների ցանկը և ժամանակացույցը, «Քենդլ» կենտրոնի կարգավիճակի և կառուցվածքի մասին առաջարկը, «Քենդլ» նախագծի իրականացման նախապատրաստական աշխատանքների ծախսերի նախահաշիվը.

2) միջազգային դոնոր կազմակերպությունների և գիտական կենտրոնների հետ քննարկել «Քենդլ» նախագծի իրականացման ուղղությամբ միջազգային համագործակցության հնարավորությունները և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության վարչապետին:

4. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ «Քենդլ» գիտահետազոտական ինստիտուտի հետ համատեղ երկամսյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնել առաջարկություն «Քենդլ» նախագծի իրագործման համար համապատասխան մասնագետների վերապատրաստման, ինչպես նաև ասպիրանտական տեղերի հատկացման վերաբերյալ:

5. Սահմանել, որ «Քենդլ» նախագծի համակարգման համար ստեղծվում է խորհուրդ՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի գլխավորությամբ, իսկ խորհրդի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. մայիսի 14
Երևան